15.ԱԽ-ը ակտիվ ներգրավվեց ու մասնակցեց «Ես բնագետ եմ» աշակերտական կոնֆերանսի կազմակերպչական աշխատանքներին	13.05.2023թ.	10%	ԱԽ-ը տնօրենի տեղակալ Ա.Պետրոսյանի գլխավորությամբ ստեղծեց կամավորների խումբ և ակտիվ ներգրավվեց ու մասնակցեց «Ես բնագետ եմ» աշակերտական կոնֆերանսի կազմակերպչական աշխատանքներին
16. Կազմակերպվել է Ամանորյա աղանդերի մրցույթ	21.12.2023թ.	90%	Դպրոցում ստեղծվել է տոնական մթնոլորտ, հաղթողները ստացան փոքրիկ մրցանակ
17. ԱԽ-ը համագործակցելով դպրոցի գրադարանավար Ա. Օհանյանի հետ կազմակերպել է «Ասմունքի թուպե»	21.03.2024թ.	2.5%	Պոեզիայի միջազգային օր
18.ԱԽ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է սովորողների հանդիպումը Ամերիկյան համալսարանի ներկայացուցիչների հետ	04.11.2024թ.	7%	Մասնագիտական կողմնորոշում
19.ԱԽ-ը հավաքել և իր ինստագրամյան էջով տարածել է տեղեկություններ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների պատմության, ավանդույթների և մշակույթի մասին	Նոյեմբեր 2024թ.	3%	Ազգային փոքրամասնությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորում
20.Գերմանիա մեկնած միջմշակութային փոխանակման ծրագրի մասնակիցների նախաձեռնությամբ կազմակերպվել է սեմինար	21.11.2024թ.	7.8%	Սովորողները կիսվեցին իրենց տպավորություններով և ձեռքբերումներով
21.ԱԽ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է դպրոցի մի խումբ սովորողների այցը Հայ-ռուսական համալսարան	29.11.2024թ.	4.6%	Մասնագիտական կողմնորոշում
22.ԱԽ-ը նախաձեռնել և պատրաստել է դպրոցի շնորհալիների ցուցատախտակ	Դեկտեմբեր 2024թ.	3%	Բացահայտել դպրոցի շնորհալիներին
23.Կազմակերպվել է ամանորյա դիմակահանդես	23.12.2024թ.	40%	Համադպրոցական միջոցառում
24.Կազմակերպվել է հանդիպում ապրիլյան քառօրյա պատերազմի և 44-	27.02.2025թ.	8%	ԱԽ-ին աջակցել է դպրոցի գրադարանավարուհի

օրյա պատերազի մասնակից, դպրոցի շրջանավարտ Հ. Սարկիսովի հետ			Ա. Օհանյանը
25.Ս. Սարգսի տոնին նվիրված ԱԽ-ը կազմակերպել է «Շոկոտուփ» անակնկալ միջոցառումը	14.02.2025թ.	40%	Սովորողներն ուսուցիչներին և միմյանց նվիրել են շոկոլոդներ
26ԱԽ-ի մի քանի անդամներ մասնակցել են Աջափնյակ վարչական շրջանի «Աջափնյակ գեղեգիտական կենտրոն»-ում տեղի ունեցած «Շենացրո՛ւ պետությունդ՝ եղի՛ր օրինապահ, նվիրված և հոգատար» խորագրով բանախոսությանը և մշակութային միջոցառմանը	26.04.2025թ.	1.5%	ՀՀ քաղաքացու օր
27.Աշակերտական համակազմը մասնակցել է համայնքի, դպրոցի կողմից կազմակերպած համաքաղաքային, համադպրոցական բոլոր շաբաթօրյակներին: Իրականացրել է բարեկարգման աշխատանքներ /Ա. Երզնկյանի արձանի շուրջ, հուշաքարի շուրջ/	Յուր. ուստարվա ընթացքում	15%	Շաբաթօրյակներին մասնակցելու նպատակն է. 1.Անձի մեջ ձևավորել սրտացավություն իր քաղաքի, իր դպրոցի նկատմամբ: 2.Սովորողներին մասնակից դարձնելու հասարակական աշխատանքներին:
Նկարագրել աշակերտական խորհրդի գործունեության սկզբունքները և ձևերը՝ համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին			
Դպրոցի աշակերտական խորհուրդը օժտված է ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով, որի գործունեության հիմնական սկզբունքներն են կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը: Ազատ են անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին կարծիք հայտնելու, իրենց իրավունքները պաշտպանելու գործում: Ազատ համագործակցում են մյուս կրթական հաստատությունների ԱԽ-ի և ՈւԽ-ի, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, իրականացնում են համատեղ ծրագրեր: Համագործակցում է դասարանական խորհուրդների հետ, համակարգում է դասարանական խորհուրդների և համակարգող հանձնախմբերի գործունեությունը: Հանդիսանում է սովորողների ներկայացուցիչը դպրոցի մյուս մարմինների հետ փոխհարաբերություններում, առաջարկություններ է ներկայացնում տնօրինությանը:			

Աղյուսակ 32 . Տվյալներ հաստատության ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022- 2023 ուստարի	2024- 2025 ուստարի
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	4/100%	5/100%	5/100%
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը	39	40	65
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը	-	-	-
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում	5	4	2

Ծնողական խորհրդի կողմից դպրոցի ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում	-	-	-
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.	37%	45%	45%
Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են http://www.dasaran.am , http://ktak.am , http://www.armedu.am , http://forum.armedu.am/ , http://lib.armedu.am , emis.am և այլ կրթական կայքերից, ինչպես նաև դպրոցի կայքից	90%	80%	80%
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները			
Նկարագրել վերջին 3 տարում սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողխորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները	Ամսաթիվ	Առաջարկների քննարկմանը մասնակից ծնողների թիվը	Մեկնաբանություն
1. Դպրոցի և ծնողների միջև կապերը ամրապնդելու, մանկ. աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում միասնական պահանջների ձևավորման համար առաջարկվել է տնօրինությանը համատեղ կազմակերպել միջոցառումների շարք:	2022 սեպտեմբեր 2023 սեպտեմբեր 2024 սեպտեմբեր	22 25 24	Կազմակերպվել են դասղեկների և ծնողների հետ հանդիպումներ, կատարվել քննարկումներ
2. Առաջարկվել է մասնակցել սովորողների ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը	15.03.2023թ. 04.04.2024թ. 26.09.2024թ.	22 25 24	Հիմք՝ ԾԽ հ. 3 նիստ Հիմք՝ ԾԽ հ. 3 նիստ Հիմք՝ ԾԽ հ. 1 նիստ
3. Քննարկվել է դպրոցում վտանգավոր սովորույթները կանխելուն ուղղված բոլոր հնարավոր միջոցները և դպրոցի բարեկարգման հարցերում ծնողների մասնակցության հարցը	2022թ. հոկտեմբեր 2024թ. ապրիլ 2024թ. հոկտեմբեր	66 25 84	ԾԽ հանդիպումներ, Ծնողական ժողովներ
4. Քննարկվել է արձակուրդների ժամանակ սովորողների կոլեկտիվ հանգիստ և ժամանց կազմակերպելու հարցը	10.06.2024թ. 30.05.2025թ.	25 25	Առաջարկվել են և արձակուրդների ժամանակ կազմակերպել հայրենագիտա-կան և ճանաչողական այցեր
5.Շնորհալի ծնողների ներգրավումը արտադպրոցական աշխատանքներին	Ուստարվա ընթացքում	50	Մասնակցում են
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումները՝ (հանդեսներ, հավաքներ, երեկոյթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն, մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը			
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը	Ծնողական ներդրումների չափը
1.Այցելություններ մշակութային օջախներ	2022-2023թթ. 2023-2024թթ 2024-2025թթ	ծնող՝ 30 սովորող՝ 55 % ծնող՝ 25 սովորող՝ 32 % ծնող՝ 30 սովորող՝ 56 %	
2.Ճանաչողական այցեր	2022-2023թթ.	ծնող՝ 70 սովորող՝ 65%	

	2023-2024թթ 2024-2025թթ	ծնող՝ 95 սովորող՝ 55% ծնող՝ 160 սովորող՝ 65%	
3. Հավաքներ, երեկոյթներ	2022-2023թթ 2023-2024թթ 2024-2025թթ	ծնող՝ 130 սովորող՝ 80% ծնող՝ 200 սովորող՝ 75% ծնող՝ 250 սովորող՝ 65%	
4. Հայրենագիտական ճամփորդություններ Դիլիջան, Գոշավանք, Պարզ լիճ, Բջնի, Թեղենիք, Աղվերան, Գյումրի, Հառիճավանք, Մարմաշեն, Գառնի, Գեղարդ, Էջմիածին՝ Սուրբ Գայանե և Սուրբ Հռիփսիմե եկեղեցիներ, Լոռի, Սյունիք: Ամբերդ, Խոր Վիրապ, Ապարանի «Վերածնունդ» հուշահամալիր, Հարթագյուղի Ս. Հովհաննես մատուռ, Նորավանք, Հաղպատ, Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք, Գյումրի, Գառնի, Գեղարդ, Խնձորեսկ, Բջնի, Էջմիածին, Ծաղկաձոր Սևանավանք, Մուղնի, Զարնի-Պարնի, Դսեղ, Ծովեր-Մենձեր, Ջերմուկ Էջմիածին, Մուղնի, Արագածոտնի եկեղեցիներ, Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք, Պարզ լիճ, Եղվարդ, Գյումրի, Հառիճավանք, Դաշտադեմ, Գառնի, Գեղարդ, Արզնի, Քարի լիճ, Ամբերդ, Դսեղ-Ծովեր, Սաղմոսավանք	2022-2023թթ. ուստարվա ընթացք 2023-2024թթ. ուստարվա ընթացք 2024-2025թթ. ուստարվա ընթացք	Ծնողներ՝75 Սովորողներ՝80% Ծնողներ՝110 Սովորողներ՝75% Ծնողներ՝160 Սովորողներ՝70%	
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները			
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները	Ամսաթիվ	Առաջարկությունների քննարկմանը մասնակից ծնողների թիվը և ուսուցիչների թիվը, ովքեր ծնողական խորհրդի կողմից առաջարկվել են խրախուսման կամ կարգապահական տույժի	Մեկնաբանություններ
-	-	-	-
Ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը			
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը	Ամսաթիվ	Մեկնաբանություններ	
1.ԾԽ-ի կանոնադրության և կազմի հաստատման հարցը	28.09.2022թ. 28.09.2023թ. 26.09.2024	Հաստատվել է ԾԽ-ի կազմը՝ 20 անդամ 22 անդամ 28 անդամ	
2.ԾԽ-ի նախագահի, քարտուղարի, կոլեգիալ կառավարման խորհրդի անդամների ընտրության հարցը	28.09.2022թ 28.09.2023թ 26.09.2024թ.	2022-2023 ուստարվա ԾԽ հ. 1 նիստի որոշմամբ ԾԽ նախագահ վերընտրվեց Լիանա Իսախյանը	

3.Տնօրենի հաղորդումը Հաստատության գործունեության վիճակի և հեռանկարային ծրագրերի մասին	Սեպտեմբեր 2022թ. Սեպտեմբեր 2023թ. Սեպտեմբեր 2023թ.	Ընդունվել է ի գիտություն, արվել են առաջարկություններ:
4.Ներկայացվել է նախորդ ուստարվա ներքին գնահատման արդյունքները	28.09.2022թ. 28.09.2023թ. 26.09.2024թ.	Ծխ հ 1 նիստ. ընդունվել է ի գիտություն, տեղի են ունեցել քննարկումներ
5.Դասագիքերի վարձավճարների փոխհատուցումն իրականացնելու համար սոցիալապես անապահով սովորողների ցուցակը կազմելու հարցը	28.09.2022թ. 15.11.2023թ. 26.09.2024թ.	Տնօրենի հաստատմանը ներկայացնել դպրոցի սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը՝ 49 սովորողով, Արցախից տեղահանված ընտանիքների սովորողների ցուցակը՝ 31 սովորողով /2024-25/
6.Ներկայացվել և քննարկվել է դպրոցի հաջորդ տարվա բյուջեի նախագծի նախնական տարբերակը	28.09.2022թ. 15.11.2023թ. 26.09.2024թ.	Ի գիտություն է ընդունվել ֆինանսավորման փոփոխությունները և բյուջեին տրվել է հավանություն: Արվել են առաջարկություններ ֆինանսական միջոցների հնարավորության դեպքում կատարելու համար
7.Ներկայացվել է ուստարվա ընթացքում ծնողական խորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն	30.05.2023թ. 10.06.2024թ. 30.05.2025թ.	Ծնողական խորհրդի կողմից կատարած աշխատանքները գնահատվել է լավ
8. Քննարկվել է ծնողների իրավունքների և պարտականությունների իրազեկման հարցը	յուր. ուստարի սեպտեմբեր- հոկտեմբեր	Կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկման նպատակով
9. Դպրոցական արձակուրդի օրերին սովորողների հանգստի ու ժամանցի կազմակերպման հարցը	Յուր. ուստարվա ընթացք	Կազմել համատեղ միջոցառումների ծրագիր
10. Արտադպրոցական և արտադասարնական միջոցառումներում ծնողների մասնակցության հարցը	Յուր. ուստարվա 1-ին ծնողական ժողով	Արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներում ծնողների մասնակցության նպատակով կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդները
11. Քննարկվել են ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված աշխատանքների կազմակերպման հարցը/ դաս-ի ծնողական խորհուրդներ/	Յուր. ուստարվա ընթացքում	Սեղան-աթոռնորի, պահարանների, կտորված ապակիների, դռների փականների, սանհանգույցների վերանորոգման աշխատանքների մասնակցություն
12. Քննարկվել է սովորողների իրավունքների պաշտպանության հարցը	Յուր. ուստարվա ընթացքում	Դպրոցի ԱԽ –ի հետ համատեղ կազմակերպվում են սեմինար-պարամունքներ՝ սովորողներին իրենց իրավունքների, պարտականությունների մասին իրազեկելու նպատակով:
15.Կազմակերպվել է հանդիպում ՀՀ Ոստիկանության Մաշտոցի ԱԳ բաժնի և ոստիկանության 6-րդ վարչության աշխատակիցների հետ	15.03.23թ.	Խոսվեց երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցում ծնողների պարտականությունների մասին և իրազեկեցին ՀՀ-ում թմրանյութերի հետ կապված իրավիճակի և դրանց կանխարգելման հնարավոր միջոցների մասին: Կազմակերպվեց քննարկում
16.Դպրոցի ծնողական խորհրդի կազմից կոլեգիալ կառավարման մարմնի՝ միասնական խորհրդի անդամ առաջադրելու հարցը	10.06.2024թ.	Դպրոցի ծնողական խորհրդի կազմից կոլեգիալ կառավարման մարմնի՝ միասնական խորհրդի անդամ ընտրված Լիանա Իսպիրյանի թեկնածությունը ներկայացնել լիազոր

		մարմնի հաստատմանը:	
Նկարագրել ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը և դրա ձևերը			
Սովորողների նկատմամբ միասնական պահանջներ ձևավորելու նպատակով համագործակցում են դպրոցի ԱԽ-ը և ԾԽ-ը: Առաջացած խնդիրների լուծման նպատակով տեղի են ունենում խորհրդի նիստեր, համագործակցում են սովորողների միջև ծագած խնդիրները լուծելու հարցերում, մասնակցում են դպրոցի ներքին և արտաքին բարեկարգման աշխատանքներին: ԱԽ-ի անդամները տեղեկացնում են ԾԽ-ի անդամներին, թե ինչպիսի միջոցառումներ են ցանկանում կազմակերպել և բոլոր միջոցառումները կազմակերպվում են համագործակցությամբ:			
Նկարագրել ուսումնական հաստատության առօրյայից տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը			
Դպրոցի աշխատանքների հասարակական վերահսկողությունն ապահովելու նպատակով դպրոցի ԾԽ-ի նախագահն ընդգրկվել է մասնավորժական խորհրդի կազմում, երկու ծնող էլ հանդիսանում են դպրոցի կոլեգիալ կառավարման խորհրդի անդամներ: Դպրոցի ԾԽ-ի անդամները դպրոցում քննարկվող տարբեր հարցերի կամ կազմակերպվող միջոցառումների մասին պարբերաբար տեղեկացնում են մյուս ծնողներին և նրանց ներգրավում տարբեր աշխատանքների մեջ: Ծնողները տեղեկացվում են դպրոցական կյանքի բոլոր խնդիրներին նաև տնօրենի տեղակալների, դաստ.աշխ.կազմակերպիչի, դասղեկների, ուսուցիչների, ԱԽ-ի անդամների, դպրոցի հետ համագործակցող ոստիկանության տեսուչի միջոցով: Տեղեկատվության մակարդակը բարձր հիմքերի վրա է: Ծնողական խորհրդի համակարգված աշխատանքը նպաստում է հաստատության կրթական դաստիարակչական աշխատանքների բարելավմանը:			
Ծնողների ներգրավվածությունը. սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, ներգրավվածության ձևերը			
Նկարագրել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքները, որոնց մեջ վերջին 3 տարում ծնողները ներգրավված են եղել	Ծնողների մասնակցության ձևերը և մասնակից ծնողների թիվը	Ծնողների ներդրումների չափը	Մեկնաբանություններ
Սովորողների հանգստի, ժամանցի, մշակութային օջախներ այցերի, հայրենագիտական ճամփորդությունների կազմակերպման աշխատանքներ	Զբաղվել են կազմակերպական հարցերով Միջինը՝ 85 ծնող		Զբաղվել են կազմակերպական հարցերով, օգնություն են ցուցաբերել անապահով ընտանիքների երեխաներին
Մասնակցություն համադպրոցական, համայնքային, համաքաղաքային միջոցառումներին	Աջակցություն Միջինը՝ 50- ծնող		Ծնողները մասնակից են եղել համադպրոցական, համայնքային, համաքաղաքային բոլոր միջոցառումներին
Թվարկել կայքերը, որոնցից օգտվում են ծնողները, օրինակ՝ http://emis.am , http://ktak.am , http://www.armedu.am , http://forum.armedu.am/ , http://lib.armedu.am , հաստատության կայք և այլն, մեկնաբանել դրանց անհրաժեշտությունը և օգտակարությունը			
Կայքը	Ամսաթիվ	Օգտվող ծնողների թիվը	Մեկնաբանություն
1. http://www.emis.am , www.atc.am , www.armedu.am , emis.am www.118highschool.am	Ուստարվա ընթացք	Շուրջ 520 ծնող/ 80%	

Դպրոցը և ծնողական համայնքը համագործակցում են, և դպրոցը վարում է ակտիվ հասարակական կյանք.

Աղյուսակ 33. Տվյալներ հասարակության և համայնքի համագործակցության վերաբերյալ

Ցուցանիշ			
Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման աշխատանքներին համայնքի մասնակցությունը, մասնակցության ձևը և այլ գործում կատարված ներդրումները.			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևերը	Ամսաթիվ	Ներդրման չափը	Մեկնաբանություն

1.Շենքի ետնամասի տարածքի մաքրման աշխատանքներ	Ուստարվա րնթացք		
Նկարագրել համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածության աստիճանը			
Ուսումնական հաստատության մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության համայնքի աշխատանքներին մասնակցության դեպքերը և դրանց ձևերը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների և աշխատողների տոկոսը	Մեկնաբանություն
- Համապետական շաբաթօրյակ - Համաքաղաքային շաբաթօրյակ - Համաքաղաքային շաբաթօրյակ	29.04.2023թ. 03.05.2025թ.	40% 30%	Նպաստել սովորողների աշխատանքային դաստիարակությանը
Մասնակցություն համայնքում կազմակերպվող մշակութային միջոցառումներին (այցելություն համերգասրահներ, թանգարաններ, գրադարաններ, հանդիպումներ քաղաքի նշանավոր մարդկանց հետ)	պարբերաբար	70%	Նպաստել սովորողների գեղագիտական դաստիարակությանը
1.Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության Հանրապետական ռազմամարզական խաղերի ծրագրով տարածաշրջանային փուլի մրցումներ	Հոկտեմբեր 2022թ.	1.7%	
2. Սուրբ Զատիկի տոնին նվիրված միջոցառում	09.04.2023թ. 20.04.2025թ.	10% 15%	
3.Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարության կողմից կազմակերպված համերգ	08.04.2023թ.	20%	
4. Զագի օր Աջափնյակում	29.04.2023թ.	20%	
5. ՀՀ քաղաքացու օրվան նվիրված միջոցառում	29.04.2023թ.	1.6%	
6. «Վերջին զանգ» -ին նվիրված համայնքային միջոցառում	26.05.2023թ. 23.05.2024թ. 24.05.2025թ.	15% 15% 20%	
7.Թումոյի այգում բալետային երեկոներ՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 120 ամյակին	06.06.-08.06 2023թ.	40%	
8. «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի բակում մասնակցություն Տյառնդառաջի տոնակատարությանը:	13.02.2024թ.	3%	
9.Աջափնյակ գեղագիտական կենտրոն, մասնակցություն «Քաղաքացու օր» միջոցառմանը	27.04.2024թ.	4%	
10. «Երևանի բալետային փառատոն»	02.06-05.06 2024թ. 07.06-13.06	20% 40%	
11. ՀՀ անկախության օրվան նվիրված համայնքային միջոցառում	21.09.2024թ.	20%	
12. Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նախաձեռնությամբ կազմակերպված տոնական համերգ	09.04.2025թ.	10%	
13.ՀՀ քաղաքացու օրվա կապակցությամբ Աջափնյակ վարչական շրջանի «Աջափնյակ գեղեգիտական կենտրոն». «Շենագրո՛ւ պետությունդ՝ եղի՛ր օրինապահ, նվիրված և հոգատար» խորագրով բանախոսության և մշակութային միջոցառման մասնակցություն:	26.04.2025թ.	1.6%	

14.Երեխաների պաշտպանության օրվան նվիրված համայնքային միջոցառում	01.06.2025թ.	10%	
Ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները.			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, նշել դրանց թիվը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների ու աշխատողների տոկոսը և համայնքի բնակիչների թիվը	Մեկնաբանություն
1. Սանիտարական օրեր	Յուր.գարուն	70%	
2.«Պալքար ծխելու դեմ». հակազովագղ.	2022-2023	10%	
3.«Մաքուր պահենք մեր քաղաքը»	2022-2023 2023-2024 2024-2025	35% 30% 30%	
Համայնքի բնակիչները օգտվում են հաստատության մարզադահլիճից, ինտերնետից, գրադարանից և այլ հնարավորություններից			
Նկարագրել, թե հաստատության ինչպիսի ծառայություններից են օգտվում համայնքի բնակիչները	Հաճախականությունը՝ ամսական կամ տարեկան կտրվածքով	Օգտվող բնակիչների թիվը	Մեկնաբանություն
-	-	-	-
Ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների(ՀԿ) հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության և ՀԿ-ների համատեղ իրականացված կրթական բոլոր ծրագրերը	Ծրագրի տևողությունը	ՀԿ –ի անվանումը	Մասնակից սովորողների թիվը
1. «Գիտելիքի տոնավաճառ» մրցույթ	28.09.2022թ.	ԿԶՆԱԿ	3
2. Համահայկական գիտական փառատոն.	15.10.2022թ.	ԵՊԾՀ	80
3. Առաջին օգնության դասընթաց	28.10.2022թ.	Կարմիր Խաչի հայկական գրասենյակ	30
4. Եղիշե Չարենցի 125-ամյակին նվիրված «Ժամականի շունչը դարձիր» խորագրով խաղ մրցույթին	18.11.2022թ.	Աջափնյակ վարչական շրջանի «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ	7
5.«Հարմարվողական ազգային ծրագիր Հայաստանում» շրջանակում «Դիմակայենք կլիմայի փոփոխությանը» խորագրով դպրոցականների մրցույթի եզրափակիչ փուլ	08.12.2022թ.	ՄԱԶԾ-ԿԿՀ	
5. «Խոսենք բնությունից» էկոկրթական ծրագիր	03.03-24.03 2023թ.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 7 մասնագիտական ստորաբաժանումներ	45
6. Հանդիպում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիր-ղեկավար Սերգեյ Սմբատյանի հետ	11.02.2023թ.	ԴասԱ	4
7.Հանդիպում «Ազուլեցի» հիմնադրամի տնօրեն, ասմունքող Գայանե Սամվելյանի հետ	15.02.2023թ.	Աջափնյակի «Շ. Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ	15
8. Հայկական համադպրոցական գիտության փառատոն	25.03.2023թ.	ՀՀԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտե	4
9. «Կրթություն և Կարիերա EXPO 2023» միջազգային մասնագիտացված ցուցահանդես	06.04.2023թ.	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն և «LOGO EXPO Center» ցուցահանդեսային ընկերություն	30


10. AESA-ի 22-րդ ամենամյա գիտական օլիմպիադա	Ապրիլի 15-16 2023թ.	Նորարարության և ձեռնբերեցության ազգային կենտրոն	4
11. «Մեր մոլորակի օրը» ծրագիր	22.04.2023թ.	ՀՀ ԳԱԱ երկրաբանական թանգարան	5
12. Ընթերցանության Մարաթոն-2023 -ին	28.04.2023թ.	Աջափնյակ վարչական շրջանի «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ	1
13. ՀՀ Քաղաքացու օրվա կապակցությամբ դպրոցի մի խումբ սովորողներ հյուրընկալվեցին Աջափնյակ վարչական շրջանի «Աջափնյակ» գեղագիտական կենտրոն	29.04.2023թ.	Աջափնյակ վարչական շրջանի «Աջափնյակ» գեղագիտական կենտրոն	8
14. Կենսաբազմազանության Միջազգային օրը, <<Երկիր մոլորակը իմ տունն է>> խորագրով սեմինար	22.05.2023թ.	ՀՀ ԳԱԱ երկրաբանական թանգարան և Շրջակա միջավայրի նախարարություն	5
15. Մասնակցություն «100 գաղափար Հայաստանի » համար մրցույթին	25.05.2023թ.	Գիտության կոմիտե	2
16. Առցանց մասնակցություն են Climate Uturn 12-շաբաթյա նախագծային ուսուցման ծրագրին	Սեպտեմբեր-նոյեմբեր 2023թ.	Climate Uturn	25
17. Մասնակցություն առաջին բուժօգնության դասընթացի	10.10.2023թ.	ԱԻՆ	20
18. Մասնակցություն «Թվայնագիտության արդի մարտահրավերները» թեմայով սեմինարին	18.10.2023թ.	ԵՊՀ	25
19. Մեդիագրագիտության շաբաթվա շրջանակներում մասնակցություն «Ես մեդիագրագետ եմ» խորագրով միջոցառմանը	Նոյեմբեր 2023թ.	Աջափնյակ վարչական շրջանի «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ	20
20. Մասնակցություն ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետի կազմակերպած BIOEXPO-2023-ին	11.11.2023թ.	ԵՊՀ	25
21. Այցելություն Ա. Խաչատրյանի համերգասրահ՝ դասական երաժշտություն ունկնդրելու	05.12.2023թ.	DasA	
22. Մասնակցություն Տյառնընդառաջի տոնակատարությանը:	13.02.2024թ.	Աջափնյակ վարչական շրջանի «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի	20
23. Մասնակցություն «ՅԷ՛կ նախշուն զուրուց անէնք» խորագրով հեղինակային տեսանյութերի մրցույթ	Փետրվար 2024թ.	ՀՀԿԳՄՍՆ Լեզվի կոմիտե ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ	1
24. Այցելությունայց «Կրթություն և կարիերա EXPO-2024» ցուցահանդեսին:	11.04.2024թ.	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն և «LOGO EXPO Center» ցուցահանդեսային ընկերություն	30

25. Մասնակցություն «Գիտություն» ցուցահանդեսին	23.04.2024թ.	ՀՀ ԳԱԱ	20
26. Մասնակցություն «Քաղաքացու օր» միջոցառմանմը	27.04.2024թ.	Աջափնյակ վարչական շրջանի «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի	25
27. Մասնակցություն Երվանդ Քոչար-125 ամյակին նվիրված ֆեյսբուքյան մրցույթին	14.05-18.05 2024թ	ՀՀԿԳՄՍՆ Երվանդ Քոչարի թանգարան	6
28. Առցանց մասնակցություն Oogway 5-շաբաթյա ծրագրին	Սեպտեմբեր-նոյեմբեր 2024թ.	Oogway	13
29. KOREEZ համադարոցական մրցույթի շուու – մրցանակաբաշխություն	29.09.2024թ.	Dasaran կրթական ծրագիր	1
30.Հանդիպում ինժեներության, տեղնիկայի և ծրագրավորման կենտրոնի թիմի ներկայացուցիչների հետ	26.09.2024թ.	DigiCore	25
31. Մասնակցություն Գիտության փառատոնին	01.10-06.10 2024թ.	ՀՀ ԳԱԱ	60
32. «ՀՀ վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշար	19.10.2024թ.	ՀՀԿՄՍՆ	6
33. Մասնակցություն «Շառլ Ազնավուր 100», «Սերգեյ Փարաջանով 100» համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնին	Հոկտեմբեր 2024թ.		2
34. Այց «BioExpo» կրթական ծրագրինին	08.11.2024թ.	ԵՊՀ	18
35. Մասնակցություն «Մեկնարկ» տաղանդի ծրագրին. Հայաստանի շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների ամփոփիչ համերգ	25.11.2024թ.	ՀՀԿԳՄՍՆ	20
36. «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթվա» շրջանակներում դպրոցի մի խումբ սովորողներ այցելեցին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	05.12.2024թ.	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	20
37. Մասնակցություն Դասարան-դասական թատերական կրթական ծրագրին	15.03-15.04 2025թ.	Գ. Սուրուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն ՀՀԿԳՄՍՆ	1
38. Հանդիպում Armenian Code Academy կազմակերպության ներկայացուցիչների հետ	03.04.2025թ.	Armenian Code Academy	30
39. Մասնակցություն «Կրթություն և կարիերե EXPO-2025» ցուցահանդեսին:	16.04-18.04 2025թ.	«LOGO EXPO Center» ցուցահանդեսային ընկերություն	150
40. Պարի միջազգային օրվան նվիրված Շառլ Ազնավուրի անվան գրադարանում կազմակերպվել է «Վարպետաց դաս և մի պարի պատմություն» խորագրով հանդիպում	30.04.2025թ.	Աջափնյակ վարչական շրջանի «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի	15
41. Մասնակցություն «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական հեծանվավազքի համայնքային փուլին	09.05.2025թ.	ՀՀԿԳՄՍՆ	4

Մաս 6

Դպրոցի հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները

Կառուցվածքային սխեմա



Դպրոցի առաջնահերթ նպատակները

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Դպրոցն ապահովում է հանրակրթության բնագավառում պետության երաշխավորած հետևյալ սկզբունքները

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) ժողովրդավարական կառավարման սկզբունքները.

4) ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը

Ոլորտ	Նպատակ
Դպրոցի գործունեությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի	1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը. 2) մարդկային արժանապատվության պահպանմանը. 3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը. 4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը. 5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը. 6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը. 7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:
	Հանրակրթության պետական նոր չափորոշիչներդրումը
Ուսումնական (ֆիզիկական) միջավայր	Արդի կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի ապահովում:
Մանկավարժական համակազմ Նպատակ – կարողությունների ընդլայնում	Ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացում, ինքնազարգացման ուղղությամբ աշխատանքների շարունակականության (առարկայական, մեթոդական, ՏՀՏ կիրառման, կամավոր և պարտադիր ատեստավորման ուղղությամբ) ապահովման և անհատական ուսումնական ծրագրերի իրականացման միջոցով ուսման որակի զարգացում:
Ուսումնանյութական բազա (ռեսուրսներ)	Առարկայական մեթոդավորումների կողմից ստեղծված դիդակտիկ նյութերով համալրում, որոնք համապատասխանում են առարկայական չափորոշիչներով առաջադրված վերջնարդյունքների և կարողունակությունների ձևավորմանը: Ապահովել ՏՀՏ-ի մատչելիությունը և բարձրացնել սովորողների համար գրադարանային ծառայությունների որակը: Կատարելագործել դասավանդման որակը՝ ընդլայնելով ուսումնառության հնարավորությունները, սովորողին ներգրավելով ուսուցման գործընթացի կազմակերպման գործում:
Ուսումնական գործընթաց	Ուսումնառության ու դասավանդման որակի բարելավում՝ համագործակցային տեխնոլոգիաների կիրառմամբ: Ուսուցման կոլեկտիվ եղանակի ներդրման շարունակականության ապահովում՝ «սովորողը և՛ սովորող է, և՛ սովորեցնող, և՛ ուսումնական գործընթացի կազմակերպիչ» կարգախոսը իրականացնելով: Սովորողների կողմից մասնագիտական կողմնորոշման և նախամասնագիտական կրթության ուղղորդվածության համապատասխան մակարդակի ապահովում:
Դաստիարակության գործընթաց (արժեհամակարգի ձևավորում, քաղաքացիական կրթության ապահովում, համայնքային	Սովորողներին՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտության զարգացում, համայնք-դպրոց կապի ամրապնդում: Սովորող-ուսուցիչ, սովորող-սովորող, ծնող-ուսուցիչ աշխատանքային

կյանքում ներգրավում):	առողջ մթնոլորտի ապահովում: Սովորողների և աշխատակազմի առողջ ապրելակերպի, բարոյահոգեբանական պայմանների ապահովում:
-----------------------	---

Սպորն ներկայացված աղյուսակով նկարագրվում են իրավիճակի վերլուծության արդյունքները, հիմնախնդիրները: Առանձնացված են հիմնախնդիրների հաղթահարման նպատակով սահմանված խնդիրները:

Իրավիճակի վերլուծություն	Հիմնախնդիրներ	Նպատակ	Խնդիր
Դպրոցում սովորում են հիմնականում 15-18 տարեկան երեխաներ: Երեխայի տարիքային զարգացման հենց այս փուլում է ձևավորում հասարակական քաղաքացիական վարքը, անձը կայանում է իբրև անհատականություն: Երեխաների դաստիարակության հիմնական պատասխանատուները ծնողներն են, սակայն նրանց զգալի մասը միշտ չէ, որ զբաղվում է երեխաների մեջ հասարակական-քաղաքացիական արժեքների ձևավորմամբ: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրը լուրջ և համակարգային ուշադրության կարիք ունի:	Դպրոցում սովորողների թիվը չի գերազանցում լիցենզիայով սահմանված թիվը, սակայն փաստացիորեն ուսումնական ֆիզիկական միջավայրի անբավարարությունը խոչընդոտում է ժամանակակից կրթական պահանջները բավարարելուն Արժեհամակարգի ձևավորման բացթողումները բացասաբար են անդրադառնում սովորողի՝ իբրև անհատ կայացման, ինքնահաստատման, ինքնուրույնության, վաղվա հասարակության լիարժեք անդամ դառնալու վրա	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում Ուսումնական գործընթացում և ծնողների հետ համագործակցության միջոցով հասնել սովորողների՝ հանրակրթության պետական նոր չափորոշով սահմանված կարողունակությունների ձևավորմանը՝ մեծ ուշադրություն դարձնելով ծրագրի արժեք և դիրքորոշում բաղադրիչներին արժեհամակարգի ձևավորմանը, նրանց մեջ զարգացնել հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու, իբրև անհատ կայանալու հմտություններ:	Շարունակական վերապատրաստումների, անհատական աջակցման միջոցով հասնել այն բանին, որ ուսուցիչները արդեն հաջորդ ուսումնական տարում ուսումնական գործընթացը նաև 11-րդ դասարաններում կազմակերպեն հանրակրթության պետական նոր չափորոշիչին համապատասխան՝ համագործակցելով ծնողների հետ սովորողների արժեքային համակարգի և դիրքորոշման ձևավորման գործում: Համագործակցել սովորողների ակտիվությունը խթանող, քաղաքացիական գիտակցության ձևավորմանը նպաստող երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր

1. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնասօժանդակ և ուսուցչական կազմը

- Դպրոցի վարչական կազմը՝ տնօրեն, երկու տեղակալ, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով երկու տեղակալ, ունեն հստակ ձևակերպված պարտականություններ: Անմիջականորեն նպաստում են ուսուցիչների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարձրացմանը՝ համակազմի շահադրդման (մոտիվացիայի), նվիրվածության և աշխատանքային պայմանների վրա ունեցած իրենց ազդեցությամբ: Զարգացնում են դրական փոխհարաբերություններ և շփումներ, ձևավորում համագործակցային փոխհարաբերություններ, խթանում ուսուցման համագործակցային մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում: Ստեղծում են դպրոցի մշակույթի հենքը, ապահովում բաց միջավայր:

- Ուսուցիչների գերակշիռ մասն ունի բարձր մասնագիտական պատրաստվածություն, մասնակցել է ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթության ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից 2021 թ. կազմակերպված պետական, առարկայական նոր չափորոշիչներին և ծրագրերին նվիրված 5-ամսյա վերապատրաստումներին, իրականացրել փորձարկումներ, ինչպես նաև կամավոր արեստավորման վերապատրաստումներին՝ ուսուցիչներից 21-ն արդեն անցել են կամավոր արեստավորումը, սովորողների հետ համատեղ իրականացրել հետազոտական, նախագծային աշխատանքներ և կարողանում է ձեռք բերած նոր հմտությունները համադրելով դպրոցում արդեն կիրառվող ուսուցման համագործակցային (ոչ դաս-դասարանային) եղանակի

Թույլ կողմեր

1. Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնասօժանդակ և ուսուցչական կազմը

- Ներդպրոցական վերահսկողության կազմակերպման ժամանակակից մեթոդների ուսումնասիրումը և կիրառումը, արդյունքների վերլուծության հիման վրա թույլ կողմերը ուժեղացնելուն միտված նախաձեռնությունների պակասը: Սովորողի արժեհամակարգի ձևավորմանը միտված բազմակողմանի միջոցառումների պակասը:

- Ուսուցիչները (դասղեկները) ամենօրյա և ամենշաբաթյա ռեֆլեքսիաները (ինքնաանդրադարձ վերլուծություն), որոնք նպաստում են ուսումնական խմբի ուսուցման կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, իրականացնում են հիմնականում դասամիջոցների ընթացքում:

մեթոդիկաներին և մանկավարժական
տեխնոլոգիաներին՝ ապահովել
յուրաքանչյուր սովորողի ուսումնառության
անհատական ծրագրի իրականացումը՝
հաշվի առնելով սովորողի
առանձնահատկությունները: Ուսուցիչներ
ունեն ՏՀՏ կիրառելու հմտություն,
տիրապետում են գնահատման
մեթոդաբանությանը: Ուսուցիչների մի
մասը նաև վերապատրաստող է:

Դպրոցի բոլոր ուսուցիչները
համապատասխանում են զբաղեցրած
պաշտոնին, նրանցից 7 ուսուցիչներ ունեն
որակավորման փարակարգի առաջին
աստիճան, 21-ը՝ կամավոր
ատեստավորված են:

- Ուսումնաօժանդակ կազմը ունի
պարտքի և պատասխանատվության
զգացում և բարեխղճորեն իրականացնում
է իր աշխատանքային

- պարտականությունները:

2. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության ուժեղ կողմեր

- Դպրոցում ուսումնական
պարապմունքների հիմնական ձևը
կոլեկտիվ ուսումնական պարապմունքն է,
երբ սովորողը և՛ սովորող է, և՛
սովորեցնող, և՛ ուսումնական գործընթացի
կազմակերպիչ: Ուսումնառության
ընթացքում ձևավորվում են սովորողի ոչ
միայն գիտելիքները, այլև ուսուցանելու,
ընկերոջից սովորելու, փոփոխական
կազմով զույգերում և խմբերում
աշխատելու կարողություններ և
հմտություններ:

3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր

- Դպրոցում գործում են աշակերտական
և ծնողական խորհուրդներ:
Աշակերտական խորհրդի
գործունեությունը իրականանում է
ժողովրդավարության և ինքնավարության
սկզբունքներին համապատասխան, որի
ներկայացրած առաջարկություններն
ամբողջությամբ արդացվում է:

- Ուսումնաօժանդակ կազմի
աշխատանքը նախաձեռնողական բնույթ
չի կրում:

2. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմեր

- Դպրոցի ավարտական (12-րդ)
դասարաններում նվազում է սովորողների՝
հանրակրթական առարկաների
յուրացման ձգտումը՝ պայմանավորված
բուհ ընդունվելու համար անհրաժեշտ
առարկաների նկատմամբ ուշադրության
մեծացմամբ:

3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության թույլ կողմեր

- Սովորողների ակտիվությունը
խթանող, քաղաքացիական գիտակցության
ձևավորմանը նպաստող երիտասարդական
հասարակական կազմակերպությունների
հետ համագործակցությունը բավարար
մակարդակի վրա չէ:

սովորողների կարիքները: Աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրենության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում՝ ծավալելով հանրագույր աշխատանք:

- Ծնողական խորհուրդը հիմնականում համագործակցում է դպրոցի կառավարման խորհրդի, մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ, աջակցում սովորողների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքներին:
- Դպրոցը համագործակցում է համայնքի հետ և հաճախակի հանդես գալիս նախաձեռնություններով:

4. Ռեսուրսներով ապահովվածությունը

- Դպրոցն ունի պարզաճ կահավորված հանդիսությունների դահլիճ, նիստերի դահլիճ, համակարգչային 1 կաբինետ, 22 նոութբուք, 26 համակարգիչ, 7 ինտերակտիվ գրադասարան, 8 տեսապրոեկտոր, քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի 2 հագեցած ուսումնական լաբորատորիաներ, ուսումնական և գեղարվեստական գրականությամբ հագեցած գրադարան: Դպրոցն ապահովված է դասագրքերով, այլ ուսումնական գրականությամբ:

5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները

- Անկախ այն հանգամանքից, որ հանրակրթության պետական և առարկայական նոր չափորոշիչների ներդրումը նախատեսված է սկսել 2023-2024 ուսարում, դպրոցում սեփական նախաձեռնությամբ անցկացվել են սեմինար-քննարկումներ չափորոշիչների վերաբերյալ, նոր չափորոշիչների անհրաժեշտության գիտակցման նպատակով համեմատվել են գործող և նոր չափորոշիչների բովանդակությունը, կառուցվածքը,

- Փոքր է ծնողների ակտիվությունը սովորողների դպրոցական և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպելու գործում:

4. Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները

- Գրադարանի տարածքը փոքր է ժամանակակից տեխնիկայով և տեխնոլոգիաներով հագեցած ընթերցասրահ ձևավորելու համար:

5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը

- Դպրոցը նոր նախաձեռնություններն իրականացնում է բացառապես աշխատակազմի կամավոր անվճար, թեպետև ծանր աշխատանքի շնորհիվ. դպրոցի ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս լիարժեք խրախուսել աշխատակազմի նախաձեռնությունները:

առանձնահատկությունները, կատարվել է վերլուծություն, թե որքանով է դպրոցում ներդրվող ուսուցման կոլեկտիվ (ոչ դաս-դասարանային) եղանակը (գաղափարախոսական հենքը համագործակցությունն է. սովորողն իր կրթական պահանջները բավարարում է ուսուցչի և այլ սովորողների օգնությամբ, և ինքն էլ օգնում է մյուսներին՝ բավարարելու նրանց կրթական պահանջները: Նա և՛ սովորող է, և՛ սովորեցնող, և՛ կրթական գործընթացի կազմակերպման մասնակից) ապահովում չափորոշիչների պահանջները: Արդեն ավանդույթ է դարձել, որ երկրորդ կիսամյակում 12-րդ դասարանի սովորողները սեփական նախաձեռնությամբ մասնակցում են 10-րդ դասարանի սովորողների ուսումնական գործընթացի կազմակերպմանը՝ իրականացնելով նաև իրենց ուսումնական խնդիրների լուծումը (կրկնությունը): Արդեն մի քանի տարի է, որ դպրոցը նախաձեռնել է համագործակցություն հիմնական դպրոցների հետ՝ նրանց սովորողների համար կազմակերպելով բնագիտական առարկաների լաբորատոր փորձեր դպրոցի հագեցած լաբորատորիաներում, ինչպես նաև ռազմագիտության դասընթացի շրջանակներում՝ վարժասարքի միջոցով հրաձգության վարժանքներ կազմակերպելով: Դպրոցը համագործակցում է ԵՊՀ-ի և ԵՊԲՀ-ի հետ:

6. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը

Դպրոցում կիրառվող ուսուցման կոլեկտիվ (ոչ դաս-դասարանային) եղանակի հենքը ինքնին հաղորդակցությունն է և համագործակցությունը: Ի տարբերություն ուսուցման խմբային եղանակի՝ այստեղ հենց ուսուցման գործընթացն է կազմակերպվում այնպես, որ անհնար է առանց հաղորդակցման և համագործակցության: Դպրոցում համագործակցային, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է ստեղծագործական ու նորարարական

6. Հաղորդակցության, համագործակցության թույլ կողմերը

Պայմանավորված սովորողների թվի անընդհատ աճով՝ դպրոցում ավելացել է նոր ուսուցիչների թիվը, որոնք չեն տիրապետում հաղորդակցական և համագործակցային հմտությունների ձևավորմանը նպաստող ուսուցման կոլեկտիվ եղանակին բնորոշ, ինչպես նաև այլ նորարարական մանկավարժական տեխնոլոգիաներին: Բարդ է ուսումնական գործընթացին զուգահեռ ցանկալի արագությամբ կազմակերպել սեմինարներ նոր

մոտեցումների զարգացմանը: • Համագործակցային, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպատակաուղղված է իրազեկ, տեխնոլոգիական ձեռքբերումներն արդյունավետ գործածելու ունակություն ունեցող, բարոյական և օրինապահ այնպիսի անհատի դաստիարակմանը, որը կկարողանա ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել տեղեկատվությունը և դրա հիման վրա ինքնուրույն որոշում կայացնել, այնպիսի անհատի դաստիարակմանը, որը գիրակցում է սեփական պատասխանատվությունը երկրի շահերի, ավանդույթների և արժեքների նկատմամբ, ինքն է ստեղծում արժեքներ և սեփական լուծման է ներդնում հասարակության առաջընթացի գործում: 7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները Պետբյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները:	ուսուցիչների մանկավարժական հմտությունները զարգացնելու նպատակով: 7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված դժվարությունները և խնդիրները Թեպետ ֆինանսավորման նոր բանաձևը ապահովում է դպրոցի անխոչընդոտ ֆինանսատնտեսական գործունեությունը, սակայն դժվարություններ է առաջացնում գույքի ձեռքբերման հարցում, քանի որ ֆինանսավորման պայմանագիրը սուբսիդիայի պայմանագիր է:
Հնարավորություններ 1. Մարտահրավերներին դիմագրավելու պատրաստակամություն 2. Նորարարական մոտեցումներ 3. Ծնողների, համայնքի ներուժի օգտագործում	Վերանգներ 1. Դպրոցավարման ձևերի կարծրադիպեր 2. Վախ նորի հանդեպ 3. Դպրոցական գույքի ձեռքբերման հետ կապված դժվարություններն ու խնդիրները